չառքով և ուրիշ աչք կուրացնող խարդախութեամբ կը լինի։

24. «*Հովիւ Սիսо*». *Մպտեալ Սուլթան Մուրատին կը հիւրասիրէ, որուն փոխադարձ այց տուած ժամանակ ըսեր է. «Այս պալատը անտարակոյս հօրենական ժառանգութիւն է». Սուլթանը անոր գիւղեր է նուիրեր Պայազիտի մէջ. Պէրիւկան ցեղի չէֆերը այս մարդու ընտանիքէն են և կը բնակուին Պայազիտի ու Մակուի միջև Ժէրպէրանը։*

25. «*Զինար աղա և Լէյլի*». *Սիրահարութիւն ու սպանութիւններ։*

26. «*Իսմայիլ աղա և Թարլան աղա*». *Երկու ցեղապետներ՝ վերջինը վարձուած քիւրդով մը կ'ուզէ սպաննել առաջինին, այդ առթիւ թշնամութիւն ու վրէժխնդրութիւն Շիկէֆթի և Հէրքի ցեղերու միջև։*

27. «*Մուլլա Մուհամմէտ*». *Ինքզինք կը կեղծէ իբր Ցոյն հոգևորական ու Շէյխ-իլ-Իսլամի մօտ երթալով կ'երևցնէ որ եկեր է սովրելու կրօն ու լեզու. իբրև նորուս՝ և այնքան յաջող գտնուելու առթիւ, վերջապէս կ'ընդունուի կայսեր ներկայութեան, շատ մը գիւղեր կ'ստանայ նուէր ու դառնալով Սիւլէյմանիյէ՝ դպրոցներ կը բանայ Քիւրդիստանի մէջ։ Քրիստոնեական կրթութեան ու հայրենիքի գաղափարը։*

28. «*Կէրլի և Էհմի*» (*երկու եղբարք*). *Կռիւ Արաբներու հետ. քաջութիւններ՝ քիւրդ ցեղի անունը ստոր ճանչնալու դէմ բողոքելու համար։*

29. «*Ահմէտ Ցագի*». *Հայ Մատոն կը խեղդէ Ահմէտ Ցագիին։*

30. «*Միր Եզտին-Շէր և ծառայ Գուլօ*». *Առաջինը Հէքեարիի իշխանն է, միւսը հայ ծառան. իշխանը կ'սպառնայ ծառային՝ որ նա յարգանք չի տածեր դէպ կրօնը. այդ առթիւ՝ նա իր հոգւոյ փրկութիւնը գտնելու համար կը դիմէ այս անգամ մուլլաներուն, մուլլաներ իրեն խորհուրդ կուտան որ դպրոցներ բանայ։ Կայ և սիրային կասկած Խանումի և Գուլօի համար։*

Այսքանն ալ կարծեմ բաւական է։